ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«05» մայիսի 2018 թվականի № 29-Ա

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 1-ի № 1421-Ն որոշումը և ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և «ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերության միջև 2017 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված թիվ Պ-005 «Նավթի և բնական գազի արտադրանքի բաժանման պայմանագրի» 6-րդ գլխի 6.2 կետի պահանջը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել տեխնիկական խորհրդատվական կոմիտե և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Տեխնիկական խորհրդատվական կոմիտեին՝ առաջնորդվել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության և «ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՎԹԻ ԵՎ ԳԱԶԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՍՊ ընկերության միջև 2017 թվականի դեկտեմբերի 26-ին կնքված թիվ Պ-005 «Նավթի և բնական գազի արտադրանքի բաժանման պայմանագրի» 6-րդ գլխի 6.2 կետի պահանջներով:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարի
«05» մարտի 2018 թվականի № 29-Ա հրամանի

Աշոտ Բարսեղյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ընդերքի գործակալության ընդերքաբանական փորձաքննության և պաշարների հաստատման բաժնի գլխավոր մասնագետ
Կարեն Գասպարյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ընդերքի գործակալության ընդերքօգտագործման իրավունքի ձևավորման բաժնի գլխավոր մասնագետ
Անդրանիկ Աղաբալյան	Տեխնիկական Գիտությունների Թեկնածու (Տ.Գ.Թ.) «Գեոէկոնոմիկա» ՓԲ ընկերության գլխավոր տնօրենի տեղակալ (համաձայնությամբ),
Էրիկ Անանյան	տեխնիկական խորհրդատվական կոմիտե նախագահ, «Էներգո Ինվեստ Հոլդինգ» ՓԲ ընկերության էկոնոմիկայի գծով տնօրեն (համաձայնությամբ),
Սեդա Մարտիրոսյան	«Էներգո Ինվեստ Հոլդինգ» ՓԲ ընկերության կորպորատիվ տնօրեն (համաձայնությամբ),
Լիանա Լոբասյան	«Էներգո Ինվեստ Հոլդինգ» ՓԲ ընկերության իրավական բաժնի ղեկավար երկրաֆիզիկոս (համաձայնությամբ):